ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

29.01.2021թ.

Հաստատված է ՀՀ կրթության տեսչական մարմնի
ղեկավարի 01.02.2021թ. N 3-L հրամանով

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԿՏՄ) 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության բովանդակությունը		Էջը
1.	*ԿՏՄ որակի ապահովման ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվություն*	2
2.	*ԿՏՄ գործունեության 2020 թվականի ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն*	6
3.	*ԿՏՄ 2020 թվականի գործունեության ծրագրով սահմանված թիրախներին հասնելու մասին տեղեկատվություն, արդյունքների վերլուծություն*	9
4.	*ԿՏՄ կողմից հաշվետու ժամանակահատվածում իրազեկման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն*	19
5.	*Խորհրդատվական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն*	20
6.	*Տեղեկատվություն ԿՏՄ կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումների, դրանց նպատակների և ստացված արդյունքների վերաբերյալ*	20
7.	*<u>Տեղեկություն իրականացված ստուգումների վերաբերյալ</u>* *7.1. Հաշվետու տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.2. Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.3. Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով)* *7.4. Տեղեկատվություն 1 ստուգման (պլանային և ոչ պլանային) ժամանակ ծախսված ֆինանսական և մարդկային ռեսուրսների քանակի, ինչպես նաև 1 ստուգման միջին տևողության վերաբերյալ* *7.5. Ստուգումների արդյունքները* *7.6. Վարչական վարույթների քանակը, դրանց հարուցելու հիմքերը* *7.7. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, ինչպես նաև դրանց պատճառները, տարածվածությունը* *7.8.Տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցներ*	24 24 25 25 25 34 35 36
8.	*ԿՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն*	36
9.	*Օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին առաջարկները (բովանդակությունը, նպատակը)*	42
10.	*Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց*	46

	վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկատվություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին	

ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեությունը

ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ նաև ԿՏՄ կամ տեսչական մարմին) հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:

ԿՏՄ-ն գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա: ԿՏՄ կառավարման խորհրդի 28.11.2019 թ. N 5 (10) որոշմամբ հաստատված ԿՏՄ գործունեության 2020 թվականի ծրագրով նախատեսված գործառույթների շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացվել են ստորև նշված աշխատանքները.

1. ԿՏՄ որակի ապահովման ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվություն

ԿՏՄ կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

ԿՏՄ կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ.
2. գործընթացի չափորոշիչներ.
3. արդյունքի չափորոշիչներ:

1.ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) ԿՏՄ գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

ԿՏՄ գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2020 թվականին ԿՏՄ գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը 0,06 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,03.

հանրակրթության ոլորտ՝ 0,09.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,1:

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում ԿՏՄ կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված

ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2020 թվականին ԿՏՄ ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը 0,06 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,09.

հանրակրթության ոլորտ՝ 0,04.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,06:

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները

2020 թվականին ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել, իսկ մարդկային ռեսուրսները միջինում կազմել է 5,5 աշխատակից:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները

2020 թվականին ԿՏՄ կողմից իրականացված խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացվել են 20800 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ, և մասնակցել է 37 աշխատակից (բոլոր միջոցառումներին մասնակցած աշխատակիցների թիվը): Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0 ՀՀ դրամ և 12 աշխատակից .

հանրակրթության ոլորտ՝ 20800 ՀՀ դրամ և 13 աշխատակից.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0 ՀՀ դրամ և 12 աշխատակից :

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը

2020 թվականին տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացրել է 122 առաջարկ: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 11 առաջարկ.

հանրակրթության ոլորտ՝ 88 առաջարկ.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 23 առաջարկ :

2.ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են ԿՏՄ գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2020 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը 3,14 օր է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 3 օր.

հանրակրթության ոլորտ՝ 3,2 օր.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 3 օր:

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և տեսչական

մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը:

2020 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ 0,74 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 0,8.

հանրակրթության ոլորտ՝ 0,74.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 0,67:

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է 3.3 օր: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 1.85 օր.

հանրակրթության ոլորտ՝ 3.56 օր.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 4.39 օր:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին[1]:

2020 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) 0 է:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով չափորոշչում նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները:

2020 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ բերվել է 2 դիմում-բողոք:

3.ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը

2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը 10,3 է: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 20.

հանրակրթության ոլորտ՝ 6,8.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 18:

---

[1] Այն ստուգումները, որոնց դեպքում կիրառված ստուգաթերթերի կիրառված կետերի «ոչ» պատասխանների թիվը 80 և ավել ի տոկոս է:

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը

	ՈԼՈՐՏՆԵՐ	2019 թվական			2020 թվական		
		Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների թիվը	Հայտանբերված խախտումներ կշիռների հանրագումարը	Նպատակին հասնելու մակարդակը	Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների թիվը	Հայտանբերված խախտումներ կշիռների հանրագումարը	Հայտնաբերված խախտումների միջինացված ցուցանիշները
1.	Նախադպրոցական կրթության ոլորտ	19	417,5	21,97	16	216	13,5
2.	Հանրակրթության ոլորտ	33	316	9,58	25	124,7	4,99
3.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ	19	240	12,6	12	57,1	4,76

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով:

2020 թվականին իրականացված ստուգումներին միջինում հատկացվել է 43374.1 ՀՀ դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,54 աշխատակից: Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

նախադպրոցական կրթության ոլորտ՝ 15705 ՀՀ դրամ և 1.29 աշխատակից.

հանրակրթության ոլորտ՝ 62851 ՀՀ դրամ և 1.88 աշխատակից.

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ՝ 31926 ՀՀ դրամ և 1,11 աշխատակից :

3.4) ԿՏՄ, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

2020 թվականի ընթացքում տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների բերվել է 2 դիմում-բողոք: Դրանցից մեկին տեսչական մարմինը պատասխանել է գրությամբ, իսկ երկրորդը կարճվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

2. ԿՏՄ գործունեության 2020 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն

ԿՏՄ-ն իր գործունեությունն իրականացրել է՝ հիմք ընդունելով ԿՏՄ կառավարման խորհրդի 28.11.2019թ. N 5 (10) որոշմամբ հաստատված 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

ԿՏՄ գործունեության 2020 թվականի ծրագրի նպատակն էր՝ **վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցով նպաստել տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առավել որակյալ և արդյունավետ կրթություն ունենալուն՝ ըստ սահմանված ուղղությունների (խնդիրների):**

Առանձնացվել էին ծրագրի նպատակից բխող խնդիրներն ըստ ոլորտների:

Նախադպրոցական կրթության ոլորտ

✓ երեխայի տարիքային խմբին համապատասխան ուսուցում, դաստիարակություն, կրթություն:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ

➢ առավել որակյալ ուսուցում և ուսումնառություն (□Հայոց լեզու□, □Մաթեմատիկա□, □Ինֆորմատիկա□ առարկաներ):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ

➢ կրթական գործունեության առավել արդյունավետ կազմակերպում և կառավարում:

ԿՏՄ 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակից բխող խնդիրների իրականացման համար սահմանվել էին միջանկյալ արդյունքներ, թիրախներ (տես՝ *2020 թ-ի գործունեության տարեկան ծրագիր www.eib.am*):

Վերոնշյալ խնդիրների իրագործման նպատակով իրականացվել են գործողություններ հետևյալ 2 հիմնական ուղղություններով՝

1. Կանխարգելիչ, իրազեկման, խորհրդատվական միջոցառումներ.

2. Վերահսկողական գործառույթներ (ստուգումներ, ուսումնասիրություններ, վարչական վարույթներ):

Համաձայն 2020 թվականի ստուգումների ժամանակացույցի **I եռամսյակում** ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացներ ՀՀ 28 ուսումնական հաստատություններում (9 մանկապարտեզներ, 14 դպրոցներ, 5 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ): Հայաստանի Հանրապետությունում սուր շնչառական՝ կորոնավիրուսային վարակի կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումների շրջանակներում հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի դադարեցման պատճառով ստուգումներ են իրականացվել նախատեսված 27 (ՀՀ Շիրակի մարզի «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցը 08. 01. 2020թ-ից դպրոցը դադարեցրել է իր գործունեությունը ֆինանսավորման բացակայության պատճառով) ուսումնական հաստատություններից 16-ում՝ 59% (3 մանկապարտեզներ, 9 դպրոցներ և 4 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ): ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամաններով կասեցվել են արդեն իսկ սկսված ստուգումների գործընթացները, վարչական վարույթները, հետաձգվել են խորհրդատվական միջոցառումները:

Սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով միայն 2020 թվականի I եռամսյակում ՀՀ 9 դպրոցներում իրականացված ստուգումների ընթացքում է հնարավոր եղել տալ գրավոր աշխատանքներ: Ինչի արդյունքում էլ այդ 9 դպրոցներում է կրթական գործընթացը գնահատվել՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: 2020 թվականի II եռամսյակում իրականացվել են գնահատման արդյունքների վերլուծություններ: Վերլուծությունները՝ զարգացմանը միտված առաջարկներով տրամադրվել են համապատասխան դպրոցների տնօրեններին:

Ստեղծված իրավիճակը գնահատելու նպատակով 2020 թվականի մարտի 24-27-ը ՀՀ հանրակրթական դպրոցների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հետ իրականացվել է էլեկտրոնային հարցում՝ արտակարգ դրությամբ ընդգրկված ժամանակահատվածում ուսումնական հաստատությունների կողմից հեռավար ուսուցման իրականացմանը վերաբերող խնդիրների բացահայտման նպատակով: Հարցմանը մասնակցած շուրջ 400 դպրոցների և 45 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կողմից լրացված հարցաթերթերը ուսումնասիրվել են ԿՏՄ-ում: Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը առաջարկներով ուղարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ ԿԳՄՄՆ):

2020 թվականի **II եռամսյակում** ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացներ ՀՀ 20 ուսումնական հաստատություններում (4 մանկապարտեզ, 8 դպրոց, 8 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ), մինչդեռ՝ վերը նշված պատճառներով՝ ստուգումներ են իրականացվել 8 ուսումնական հաստատություններում՝ 40% (5 հանրակրթական և 3 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ):

ՀՀ-ում սահմանված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ 2020 թվականի II և III եռամսյակներում ԿՏՄ-ն իր հիմնական ռեսուրսներն ուղղել է Երևան քաղաքի համայնքային և ոչ պետական, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ կամ մանկապարտեզ) ՀՀ պարետի 03.05.2020թ-ի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման Հավելված N13-ով (Հավելված N 12), 18.08.2020թ. №253-Ն որոշման Հավելված N 11-ով («Անվտանգության կանոններ նախադպրոցական կրթության ոլորտի կազմակերպություններում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով») սահմանված կանոնների պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողությանը (մշտադիտարկումներին): Իրականացվել են **1086** մշտադիտարկումներ:

2020 թվականի **III եռամսյակում** ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացներ ՀՀ 21 ուսումնական հաստատություններում (13 մանկապարտեզներ, 3 դպրոցներ, 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ), մինչդեռ ստուգումներ են իրականացվել 31 ուսումնական հաստատություններում (12-ը մանկապարտեզներ են, 10-ը՝ դպրոցներ, 9-ը՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ):

ՀՀ պարետի 30.07.2020թ. N Ց/152-2020 ցուցման համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն են ներկայացվել հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբացման և համավարակի պայմաններում դրանց կառավարման վերաբերյալ ԿՏՄ առաջարկներն ու դիտարկումները՝ ներկայացված ըստ ՀՀ պարետի գրությանը կից ծրագրի նախագծի՝ համապատասխան մեկնաբանություններով:

2020 թվականի III և IV եռամսյակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ 186 և 96 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 147 հանրակրթական և 90 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

«Երեխաների անվտանգության և դիմակայունության ամրապնդումը ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների դպրոցներում» ծրագրի շրջանակներում, «Միացյալ Թագավորության Հակամարտային կայունության և անվտանգության հիմնադրամի» ֆինանսավորմամբ, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամի համագործակցությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) առկայության պայմաններում ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների 15 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթական գործընթացի (կրթության անվտանգություն, մատչելիություն) կազմակերպման որակի նկատմամբ մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների արդյունքների վերլուծության արդյունքում կրթական գործընթացի մասնակիցներին, շահառուներին ներկայացվել են կրթության կազմակերպման անվտանգության, մատչելիության ապահովման վերաբերյալ առաջարկություններ (տե՛ս http://www.eib.am/reports/):

2020 թվականի **IV եռամսյակում** ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացներ ՀՀ 35 ուսումնական հաստատություններում (10 մանկապարտեզներ, 15 դպրոցներ, 10 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ), մինչդեռ ստուգումներ են իրականացվել 19 ուսումնական հաստատություններում (5-ը մանկապարտեզներ են, 12-ը՝ դպրոցներ, 2-ը՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ):

Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի հեռավար և առկա հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող դպրոցների հետ ԿՏՄ ծառայողների կողմից իրականացվել են ամենօրյա աջակցման և խորհրդատվական միջոցառումներ, որոնք ամենօրյա ռեժիմով ամփոփվել և համապատասխան գրություններով ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին, ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին՝ իրենց լիազորությունների շրջանակում բարձրացված խնդիրների շուտափույթ լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու առաջարկով:

ԿՏՄ նախաձեռնությամբ վարչական վարույթներ են իրականացվել Երևան քաղաքի 24 ուսումնական հաստատություններում (21 մանկապարտեզ, 2 դպրոց, 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն), ՀՀ Լոռու մարզի Ալավերդու և ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Վարչական վարույթների արդյունքում կազմված վարչական ակտերը ներկայացվել են համապատասխան լիազոր մարմիններին և հաստատություններին:

Հանրակրթության, նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունների աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ, աջակցման, խորհրդատվական հեռավար միջոցառումներ:

2020 թվականին ԿՏՄ-ում ՀՀ ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ ստացվել են 60 դիմում-բողոքներ (I եռամսյակում՝ 27, II եռամսյակում՝ 14, III եռամսյակում՝ 14, IV եռամսյակում՝ 5):

3.ԿՏՄ 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու մասին տեղեկատվություն, արդյունքների վերլուծություն

2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի համաձայն՝ **Նախադպրոցական կրթության ոլորտում** թիրախ են համարվել՝

✓ ստուգման ենթակա ՆՈՒՀ-երի խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չափորոշչի համապատասխան որակական պահանջների իրականացումը.

✓ ՆՈՒՀ-ի ուսումնադաստիարակչական գործունեությունը թե՛ տնօրենի, թե՛ մեթոդիստի և մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների մասով:

ԿՏՄ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն՝ ՀՀ 20 ՆՈՒՀ-երում իրականացված ստուգումների ընթացքում թիրախներին հասնելու նպատակով իրականացված միջոցառումների ընթացքում պարզվել է՝

1. մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չեն իրականացվել չափորոշչի համապատասխան որակական պահանջները՝ 3 **(15%)** մանկապարտեզում.

2. մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով՝ 12 **(60%)** մանկապարտեզում 33 խախտում.

3. մանկավարժական աշխատողների հաստիքային միավորների պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներ՝ 16 **(80%)** մանկապարտեզում:

4. Մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը կամ չկատարմանը վերաբերող խախտումներ՝ 9 (**45%**) մանկապարտեզում:

Ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերոնշյալ խախտումների հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 20 մանկապարտեզների տնօրեններին կարգադրագրերի համաձայն տրվել են հանձնարարականներ: 20 մանկապարտեզներից 7-ի դեպքում հանձնարարականների կատարման սահմանված ժամկետը չի լրացել: 13 մանկապարտեզներից ստացված կատարողականների և տրված հանձնարարականների համադրման արդյունքում (առանձնացվել են կրթության որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող հանձնարարականները) պարզվել է.

N	*Մանկապարտեզը*	*Հանձնարարականը*	*Կատարված հանձնարարականներ*	*Չկատարված հանձնարարականներ*

		Կադրեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Այլ	Կադրեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Այլ	Կադրեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Այլ
1	Երևանի թիվ 24 մանկապարտեզ	2	1	1	4				3	2	1	1	1
2	Երևանի թիվ 82 մանկապարտեզ		1	1	1		1*		1*			1	
3	Երևանի թիվ 84 մանկապարտեզ	1	1	1		1	1*					1	
4	««Ջունիոր Քլաբ» մանկական կենտրոն» ՍՊԸ	1			1	1*			1				
5	Էջմիածնի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ		1	1				1			1		
6	Էջմիածնի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզ		1	1	1			1	1		1		
7	Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ			1	3							1	3
8	Վանաձորի թիվ 11 մանկապարտեզ		1	1	1			1	1		1		
9	Վանաձորի թիվ 32 մանկապարտեզ		1	1	1			1	1		1		
10	Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ	2		1	1			1		2			1
11	Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ		1	1	1			1	1		1		
12	Օձունի մանկապարտեզ	2	1	1	6			1	4	2	1		2
13	Փոքր Մանթաշի մանկապարտեզ	1	1	1	5	1*			2		1	1	3
Ընդամենը		9	10	12	25	1+2*	2*	7	14+1*	6	8	5	10
		56				22+5*				29			

*Կատարումն ընթացքի մեջ է

Ինչպես ներկայացված է աղյուսակում՝ 13 մանկապարտեզներին տրված 56 հանձնարարականներից կատարվել են 22-ը (39%), ընթացքի մեջ են 5-ը (9%), չեն կատարվել 29-ը (52%): Մասնավորապես.

✓ կադրային խախտումներին վերաբերող 9 հանձնարարականներից կատարվել է 1-ը, 2-ի կատարումն ընթացքի մեջ է (խախտումով նշանակված անձն ազատվել է պաշտոնից, սակայն համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձ դեռևս չի նշանակվել), 6-ը (67%)՝ չի կատարվել:

✓ հաստիքային միավորներին վերաբերող 10 հանձնարարականներից 2-ի կատրումն ընթացքի մեջ է (դիմել են լիազոր մարմին), 8-ը (80%) չի կատարվել:

✓ խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող 12 հանձնարարականներից կատարվել են 7-ը (58%), չի կատարվել՝ 5-ը (42%):

Կադրային խախտումներին վերաբերող հանձնարարականների չկատարումը հիմնականում պայմանավորված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների սակավությամբ, համայնքների համապատասխան որակավորում ստացած մասնագետների՝ համայնք չվերադառնալով, աշխատավարձի ոչ բավարար լինելով: Հաստիքային միավորներին վերաբերող հանձնարարականների չկատարումը պայմանավորված է համապատասխան լիազոր մարմնի կողմից ոչ լիարժեք հատկացված ֆինանսական միջոցներով: Խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող հանձնարարականների դեպքում պատճառը թե՛ ֆինանսական միջոցներն են, թե՛ շենքային պայմանները:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում թիրախ են համարվել՝

✓ ստուգման ենթակա դպրոցներում սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը Հայոց լեզու, Մաթեմատիկա, Ինֆորմատիկա առարկաներից:

✓ դպրոցի կրթական գործունեությունը՝ թե տնօրենի, մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների կատարման, թե սովորողների ուսուցման և ուսումնառության մասով:

Սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով ԿՏՄ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 9 դպրոցներում (***ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ, Գյումրու թիվ. 37 ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի միջնակարգ, Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական, Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական, հ.22 հիմնական և ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներ***) իրականացված ստուգումների ընթացքում տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա» առարկաներից՝ նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան («Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են ՀՀ ԿԳՄՍՆ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից, «Հայոց լեզու» առարկայից՝ թելադրություն, իսկ «Ինֆորմատիկա» առարկայից՝ թեստ): Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են VII–IX դասարաններում, միջնակարգ դպրոցներում՝ VII–XI, իսկ ավագ դպրոցներում՝ XI դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվել են նաև նույն սովորողների նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները:

Ստուգումների արդյունքում տրված գրավոր աշխատանքների մասով ունենք հետևյալ պատկերը.

«Հայոց լեզու» թելադրությանը մասնակցած 1004 սովորողներից «Անբավարար» են գնահատվել 355-ը (35%), «Բավարար»՝ 293-ը (29%), «Լավ»՝ 248-ը (25%), «Գերազանց»՝ 108-ը (11%):



Ստորև ներկայացված է «Հայոց լեզու» առարկայի թելադրության %-ային պատկերն ըստ դասարանների: Ինչպես արտահայտված է դիագրամում «Անբավարար» գնահատված սովորողների տոկոսն աճում է դասարանների բարձրացման հետ համատեղ.



«Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը կազմել է 5 միավոր (10 միավորային համակարգում): Միջին գնահատականը 5 միավորից բարձր է եղել ՀՀ Շիրակի, ՀՀ Կոտայքի մարզերի ստուգված դպրոցներում, 5 միավորից ցածր՝ Երևանի, ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում:

Համեմատվել են «Հայոց լեզու» առարկայի թելադրության և նույն սովորողների նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները: Համադրումը ներկայացված է ստորև բերված դիագրամում.



Ինչպես արտահայտված է դիագրամում՝ ուսուցիչները բարձր են գնահատում ցածր առաջադիմությամբ սովորողներին: Թելադրությունից և նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից «Գերազանց» գնահատված սովորողների տոկոսային թվերը քիչ են տարբերվում:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 959 սովորողներից «Անբավարար» են գնահատվել 454-ը (47%), «Բավարար»՝ 364-ը (38%), «Լավ»՝ 97-ը (10%), «Գերազանց»՝ 44-ը (5%):



Ստորև ներկայացված է «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի տոկոսային պատկերն ըստ դասարանների:



Ինչպես արտահայտված է դիագրամում՝ ամենացածր արդյունքները X դասարանում են: Այս դասարանում են ոչ միայն ամենամեծ տոկոսով «Անբավարար»-ը, այլև ամենացածր տոկոսով «Գերազանց»-ները: Ավագ դպրոցներում այս արդյունքը պայմանավորված է նաև նոր կրթական միջավայրով:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը կազմել է 4 միավոր: Միջին գնահատականը 4 միավորից բարձր է եղել Երևանի և ՀՀ Շիրակի, ՀՀ Կոտայքի մարզերի ստուգված դպրոցներում, 4 միավորից ցածր՝ ՀՀ Արմավիրի մարզում: Կարևոր է նշել, որ ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցների բոլոր դասարաններում միջին գնահատականը կազմել է 4 միավորից ցածր («Անբավարար»): Հետաքրքրական է այն փաստը, որ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ դպրոցի 11-րդցիները (4 սովորող) «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքից ստացել են «Անբավարար», մինչդեռ «Հայոց լեզու» թելադրությունից նրանցից ոչ մեկը «Անբավարար» չի ստացել:



Պատկերը հակասական է Անբավարար գնահատականների պարագայում:

«Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքին մասնակցած 965 սովորողներից «Անբավարար» են գնահատվել 151-ը (16%), «Բավարար»՝ 568-ը (59%), «Լավ»՝ 217-ը (22%), «Գերազանց»՝ 29-ը (3%):



Ստորև ներկայացված է «Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքի տոկոսային պատկերն ըստ դասարանների:



Միջին գնահատականը «Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքից կազմել է 5,2 միավոր: Միջին գնահատականը 5,2 միավորից բարձր է կազմել ՀՀ Շիրակի և ՀՀ Արմավիրի մարզերում, իսկ 5,2 միավորից ցածր՝ Երևանում և ՀՀ Կոտայքի մարզում: Կարևոր է նշել , որ ՀՀ Շիրակի մարզի ստուգված դպրոցներում նշված երեք առարկաներից էլ արձանագրվել են միջինից բարձր միավորներ:



«Ինֆորմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների համադրման արդյունքները ցույց են տալիս, որ ուսուցիչները գնահատականները շռայլում են բարձր առաջադիմությամբ սովորողներին գնահատելիս:

Այսպիսով, սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը համեմատաբար բարձր է «Ինֆորմատիկա» առարկայի դեպքում:

ՀՀ 36 դպրոցներում իրականացված ստուգումների ընթացքում վերոնշյալ թիրախներին հասնելու նպատակով իրականացված միջոցառումների ընթացքում պարզվել է՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 35 (97%) դպրոցում: Մասնավորապես.

1) սահմանված կարգով չի իրականացվել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի)՝ 96 խախտում 28 դպրոցում (78%).

2) սահմանված կարգով չի իրականացվել վերահսկողություն սովորողների գիտելիքների յուրացման որակի նկատմամբ 9 դպրոցից 6-ում (67%): Ինչպես արդեն իսկ նշվել էր 2020 թվականին սովորողների գիտելիքների յուրացման որակի նկատմամբ վերահսկողություն իրականացվել էր 36 դպրոցից 9-ում (25%).

3) ուսպլանի խախտումներ՝ 11 (31%) դպրոցում:

2. Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատվություն չի կրել դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի նկատմամբ՝ 10 դպրոցում (28%):

Ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նշված խախտումների հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից 35 դպրոցների տնօրեններին տրվել են հանձնարարականներ: 35 դպրոցներից 14-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման սահմանված ժամկետը չի լրացել: 5 դպրոցից կատարողականների վերաբերյալ գրություններ չեն ստացվել՝ ինչի հետևանքով հաստատությունների համապատասխան ռիսկային միավորները վերագնահատման արդյունքում ավելացել են 20 միավորով: 16 դպրոցից ստացված կատարողականների և տրված հանձնարարականների համադրման արդյունքում (առանձնացվել են կրթության որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող հանձնարարականները) պարզվել է.

ՀՀ 21 դպրոցների ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերի համաձայն տրված հանձնարարականների և հաստատություններից ստացված կատարողականների վերաբերյալ տեղեկատվություն							
N	***Ուսումնական հաստատությունը***	***Տնօրենին տրված կարգադրագիր***			***Տնօրենից ստացված կատարողական***		
		Կադրեր	***Ուսպլան***	***Այլ***	***Կադրեր***	***Ուսպլան***	***Այլ***
1	***ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ա/դ***	***2***	***5***	***3***	***2****	***1+4****	***1+2****
2	***ՀՀ Արմավիրի մարզ Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան մ/դ***	***5***	***0***	***3***	***5****	***0***	***2+1****
3	***ՀՀ Արմավիրի մարզ Արևիկի մ/դ***	***1***	***0***	***3***	***1****	***0***	***3****
4	***ՀՀ Կոտայքի մարզ Բյուրեղավանի հ/դ***	***0***	***0***	***4***	***0***	***0***	***2+2*****
5	***ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշենի մ/դ***	***1***	***0***	***1***	***1***	***0***	***1****
6	***ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձոլաքարի հ.2 մ/դ***	***1***	***0***	***1***	***1****	***0***	***1****
7	***ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդի մ/դ***	***0***	***0***	***3***	***0***	***0***	***3***
8	***ՀՀ Գեղարքունիքի մարզ Վանևանի մ/դ***	***0***	***0***	***1***	***0***	***0***	***1****

9	***ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի Վ. Անանյանի անվան մ/դ***	***2***	***1***	***1***	***2***	***1****	***1****
10	***ՀՀ Լոռու մարզի Չկալովի հ/դ***	***9***	***0***	***0***	***4+5****	***0***	***0***
11	***ՀՀ Լոռու մարզի Մեծավանի հ. 1 մ/դ***	***3***	***0***	***3***	***3****	***0***	***2+1****
12	***ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի մ/դ***	***0***	***0***	***5***	***0***	***0***	***2+3****
13	***ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի մ/դ***	***0***	***0***	***3***	***0***	***0***	***1+2****
14	***ՀՀ Լոռու Վանաձորի Գրիբոյեդովի անվան հ.11 ա/դ***	***0***	***0***	***1***	***0***	***0***	***1****
15	***ՀՀ Շիրակի մարզ Սառնաղբյուրի մ/դ***	***1***	***0***	***2***	***1****	***0***	***1+1****
16	***ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի մ/դ***	***0***	***0***	***4***	***0***	***0***	***2+1*+1*****
Ընդամենը		***25***	***6***	***38***	***7+18****	***1+5****	***16+19*+3*****
		69			***24+42*+3*****		

*՝ Ընթացքի մեջ է, **՝ չի կատարվել:

Այսպիսով, ինչպես ներկայացված է աղյուսակում 16 դպրոցներին տրված 69 հանձնարարականներից կատարվել են 24-ը (35%), ընթացքի մեջ են 42-ը (61%), չեն կատարվել 3-ը (4%): Մասնավորապես.

✓ կադրային խախտումներին վերաբերող 25 հանձնարարականներից կատարվել են 7-ը (28%), ընթացքի մեջ են 18-ը (72%).

✓ ուսումնական պլաններին վերաբերող 6 հանձնարարականներից կատարվել է 1-ը, 5-ն ընթացքի մեջ են:

Կադրային խախտումների հետևանքները դեռևս չեն վերացվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ չլինելու պատճառով: Պարբերաբար հայտարարվում են մրցույթներ: Ուսումնական պլաններին վերաբերող խախտումների հետևանքները պետք է շտկվեին նոր ուսումնական տարում: Ուսպլանի պահանջների կատարման խախտումները տնօրենների անհետևողականության արդյունք են:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների ստուգման ենթակա հաստատություններում թիրախ են համարվել

✓ համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմը.

✓ որակյալ ուսուցման ապահովումը՝ մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով.

✓ խորհրդի և տնօրենի գործառույթներն որակի ապահովման գործընթացում:

ԿՏՄ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 18 հաստատություններում իրականացված ստուգումների ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է՝

1. կադրերի ընտրության խախտումներ՝ 8(44%) հաստատությունում 11 անձ.

2.ուսումնական պլանի կարգավորումներին վերաբերող խախտումներ՝ **2**(11%) հաստատությունում.

3.խորհուրդը պատշաճ չի իրականացրել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ 7(39%) հաստատությունում:

18 հաստատություններից 3-ի դեպքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել, մյուս 3-ի դեպքում ԿՏՄ ղեկավարի կողմից հանձնարարականներ չեն տրվել՝ խախտումների հետևանքները արդեն իսկ վերացված լինելու

պատճառով, իսկ 2-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման սահմանված ժամկետները դեռ չեն լրացել: ԿՏՄ ղեկավարի կողմից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող 10 ուսումնական հաստատությունների տնօրեններից ստացված կատարողականների և տրված հանձնարարականների համադրման արդյունքում ունենք հետևյալ պատկերը (առանձնացվել են կրթության որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող հանձնարարականները).

ՀՀ 10 ՆՄՄԿ հաստատությունների ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերի համաձայն տրված հանձնարարականների և հաստատություններից ստացված կատարողականների վերաբերյալ տեղեկատվություն							
N	Ուսումնական հաստատությունը	Տնօրենին տրված կարգադրագիր			Տնօրենից ստացված կատարողական		
		Կադրեր	Ուսպլան	Այլ	Կադրեր	Ուսպլան	Այլ
1	ՀՀ ԿԳՄՍՆ Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ ՊՈԱԿ	1			1		
2	ՀՀ ԿԳՄՍՆ Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ	6			6		
3	ՀՀ ԿԳՄՍՆ Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ			2			2
4	ՀՀ ԿԳՄՍՆ «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ			4			4
5	ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ ՊՈԱԿ	1			1		
6	«Հայբուսակ» համալսարանի բազային քոլեջ» ՍՊԸ	1	3	7	1	3	7
7	«Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ» ՍՊԸ	2			2		
8	ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ			1			1
9	ՀՀ ԿԳՄՍՆ Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեսի պետական քոլեջ» ՊՈԱԿ			1			1
10	ՀՀ ԿԳՄՍՆ «Քաջարանի արհետագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ	10		1	10		1
Ընդամենը		21	3	16	21	3	16
		40			40		

Ինչպես ներկայացված է աղյուսակում՝ 10 ուսումնական հաստատություններին տրված 40 հանձնարարականներից 21-ը (53%) վերաբերել են կադրային խախտումներին, 3-ը (8%) ուսումնական պլանին: Ինչպես ներկայացված է աղյուսակում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող 10 ուսումնական հաստատություններին տրված բոլոր հանձնարարականները կատարվել են:

Այսպիսով, ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների հետևանքների վերացման նպատակով տրված հանձնարարականների կատարումը խնդրահարույց է նախադպրոցական կրթության և հանրակրթության ոլորտների ուսումնական հաստատություններում: Այդ խնդիրների լուծումը և խախտումների հետևանքների վերացումը կնպաստեն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կրթական գործընթացի լիարժեք կազմակերպման իրականացմանը, ինչն անմիջականորեն կխթանի ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի (կրթադաստիարակչական աշխատանքների) նպատակային ու արդյունավետ կազմակերպմանը, հետևաբար նաև՝ կրթության որակի բարձրացմանը:

4. ԿՏՄ կողմից հաշվետու ժամանակահատվածում իրազեկման

Միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն

Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրազեկելու՝ հնարավոր խախտումները կանխելու, հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ԿՏՄ ծառայողների կողմից իրազեկման (նաև հեռավար) միջոցառումներ են իրականացվել՝

- ***Նախադպրոցական կրթության ոլորտում***

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումների աշխատակիցների, ՀՀ **45** նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

- ***Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում***

ԿՏՄ ղեկավարի և ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի, Արարատի, Լոռու մարզպետարանների կրթության, մշակույթի, սպորտի վարչությունների աշխատակիցների, ՀՀ **159** հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

- ***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում***

ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող **21** ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Քննարկումների ընթացքում մասնակիցներն իրազեկվել են ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի № 1139-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերի 3-րդ հավելվածի բովանդակությանը: Բացատրական աշխատանքներ են տարվել ՀՀ ԿԳ նախարարի 2012 թ. ապրիլի 5-ի №254-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի (փոփ. 24.05.2019 թ. №05-Ն) վերաբերյալ:

Միջոցառումների ընթացքում քննարկվել են ստուգումների գործընթացից առաջ ուսումնական հաստատությունների տնօրեններին իրավական, մասնագիտական և մեթոդական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցերը, ինչպես նաև մասնակիցները ծանոթացել են ԿՏՄ գործունեության 2020 թ-ի ծրագրով և ստուգումների ժամանակացույցով նախատեսված առաջիկա վերահսկողական գործընթացներին (հարցաշար, ձևաթղթեր, ստուգաթերթեր, համապատասխան փաստաթղթեր և այլն): Մասնակիցների հնչեցրած հարցերը հիմնականում վերաբերել են ստուգման գործընթացին:

Իրականացված միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2020 թվականի եռամսյակային հաշվետվություններում:

5.Խորհրդատվական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն

Ստուգումների գործընթացին ծանոթացնելու (ստուգաթերթեր, համապատասխան փաստաթղթեր և այլն) նպատակով խորհրդատվական միջոցառումներ են իրականացվել՝

Նախադպրոցական կրթության ոլորտում

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումների աշխատակիցների, ՀՀ **45** նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում

ԿՏՄ ղեկավարի, ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի, ՀՀ Գեղարքունիքի, Արարատի, Լոռու մարզպետարանների կրթության, մշակույթի, սպորտի վարչությունների աշխատակիցների, ՀՀ **159** հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող **28** ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Իրականացված միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2020 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Միջոցառումների ընթացքում քննարկվել են ստուգումների գործընթացից առաջ ուսումնական հաստատությունների տնօրեններին իրավական, մասնագիտական և մեթոդական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցերը, ինչպես նաև մասնակիցները ծանոթացել են ԿՏՄ 2020 թ. տարեկան գործունեության ծրագրով և ստուգումների ժամանակացույցով նախատեսված առաջիկա վերահսկողական գործընթացներին: Մասնակիցների հնչեցրած հարցերը հիմնականում վերաբերել են ստուգման գործընթացին:

6.Տեղեկատվություն ԿՏՄ կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումների, դրանց նպատակների և ստացված արդյունքների վերաբերյալ

ԿՏՄ կողմից կանխարգելիչ միջոցառումներն իրականացվել են իրազեկման և խորհրդատվական գործառույթների միջոցով: Այդ միջոցառումների արդյունքներին արդեն իսկ անդրադարձել ենք հաշվետվության 4-րդ և 5-րդ գլուխներում:

ՀՀ-ում սահմանված արտակարգ դրությամբ ընդգրկված ժամանակահատվածում ՀՀ կրթության տեսչական մարմինն իր հիմնական ռեսուրսներն ուղղել է աջակցման և խորհրդատվական գործառույթներին:

➢ Ստեղծված իրավիճակը գնահատելու նպատակով 2020 թվականի մարտի 24-27-ը ՀՀ հանրակրթական դպրոցների, նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հետ իրականացվել է էլեկտրոնային հարցում:

Հարցման արդյունքում պատասխաններ են ստացվել ՀՀ 406 դպրոցներից և 46 նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից մարտի 24-ից ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՀ 406 դպրոցների քանակական պատկերն ըստ ենթակայության այսպիսին է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի 105, ՀՀ Լոռու մարզի՝ 74, ՀՀ Շիրակի մարզի՝ 72, ՀՀ Արմավիրի մարզի 47, ՀՀ Սյունիքի մարզի՝ 38, ՀՀ Կոտայքի մարզի 30, ՀՀ Արարատի մարզի՝ 12, ՀՀ Արագածոտնի մարզի 6, ՀՀ Տավուշի մարզի՝ 6, ՀՀ Վայոց ձորի մարզի՝ 1,Երևան քաղաքի՝ 1, ՀՀ ոչ պետական՝ 9, ՀՀ ԿԳՄՄՆ՝ 5:

Համեմատելով հարցման երկրորդ շաբաթվա ընթացքում ստացված պատասխանները առաջին շաբաթվա արդյունքների հետ նկատել ենք պատասխանների %-այինհամամասնության դրական դինամիկա:

Ուսումնական հաստատություններից ստացված տեղեկատվության համաձայն՝ 406 դպրոցներում հիմնականում իրականացվում էր հեռավար ուսուցում (բոլոր դասարաններում, որոշ դեպքերում նշվում էր՝ բացառությամբ ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, կերպարվեստ առարկաների):

Որպես միջոց նշվում էր՝ viber, youtube.com, Messinger, quizizz.com, skype, zoom, բջջային հեռախոս: Լրացուցիչ կայք էր հանդիսանում Dasaran.am-ը:

Ուսուցիչների վերապատրաստման վերաբերյալ նշում էին, որ նման առաջարկ չեն ստացել, իսկ որոշ դեպքերում՝ հայտերը ներկայացված են: Նշված ռեսուրսներում առկա պաշարների վերաբերյալ՝ հաստատությունները առաջարկում էին հագեցնել հատկապես բնագիտական առարկաների մասը: Առկա միջոցների վերաբերյալ հաստատություններից մի մասը նշել էր, որ աշակերտների մի զգալի զանգված չունի համակարգիչ, սմարթֆոն, կապ է հաստատվում ընտանիքի գոնե մեկ անդամի ունեցած սմարթֆոնի հետ, սակայն ընտանիքների մեծ մասում առկա են 2 և ավելի դպրոցահասակ երեխա և այդ մեկ սմարթֆոնով դժվարանում են հեռավար կրթությունը էլ ավելի արդյունավետ դարձնելը:

Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից ստացված տեղեկատվության վերլուծության համաձայն՝ 46 հաստատություններում հեռավար ուսուցում հիմնականում իրականացվում էր (բոլոր կուրսերում, որոշ դեպքերում նշում են՝ բացառությամբ ֆիզկուլտուրա առարկայի): Որպես միջոց նշում էին՝ viber, Messinger, skype, zoom, բջջային հեռախոս: Լրացուցիչ կայքեր են հանդիսանում youtube.com, stepik.ru: Երաժշտական մասնագիտությունների պարագայում առաջանում էին անսամբլային սինխրոն, ներդաշնակ հնչողության, ձայնարտաբերման որակի խնդիրներ, ինչը առկա ծրագրերը չէին ապահովում:

13 հաստատություններ նշել էին, որ վերապատրաստված դասախոսներ ունեն, որոնք էլ օգնում են մյուսներին: Առկա ռեսուրսները օգտակար են հիմնական կրթության հիմքով ընդունված սովորողների համար: Միջնակարգ կրթությամբ սովորողների համար նյութեր չկան: Այն հաստատությունները որոնք հավաստել էին, որ ունեն տեսադասեր, նշել էին, որ դրանք տեղադրված են իրենց ֆեյսբուքյան էջերում:

Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առկա միջոցների վերաբերյալ վիճակը ավելի բարվոք էր, քան դպրոցներում: Մինչդեռ, հեռավոր գյուղերում ապրող ուսանողները, ուսանողների մի մասն էլ սոցիալական պայմաններից ելնելով՝ չունեին համացանցի հասանելիություն, ապահովված չէին համակարգիչներով, սմարթֆոններով և այս առումով ունենում էին որոշակի խնդիրներ: Ուսումնական հաստատությունները առաջարկում էին դասախոսական և ուսանողական կազմին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը առաջարկներով ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

➢ ԿՏՄ կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում հեռավար կրթության (ուսուցման) իրականացման միտումները և խորհրդատվական, վերահսկողական գործիքների կիրառման անհրաժեշտությունը: Ուսումնասիրության ընթացքում անդրադարձ է արվել հեռավար կրթության իրավիճակին Հայաստանում, իրավիճակին՝ այլ երկրներում, ապա խորհրդատվական և վերահսկողական գործառույթներին համավարակի պայմաններում: Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը՝ համապատասխան առաջարկներով, հրապարակվել է ԿՏՄ կայքում *(http://www.eib.am/online-education/):*

➢ ԿՏՄ կողմից ուսումնասիրվել է ինքնակարգավորվող ուսուցման մոդելը (Self-regulated learning) և դրա կիրառությունը թվային հարթակում: Ինքնակարգավորվող ուսուցումը (ԻԿՈԻ) վերաբերում է ուսուցման ճանաչողական, շարժառիթային և հուզական կողմերին: Ինքնակարգավորվող ուսումը ցիկլային գործընթաց է, որի ընթացքում սովորողը կազմում է առաջադրանքների պլաններ, վերահսկում է դրանց կատարումը, անդրադառնում է արդյունքներին: Ուսուցման գործընթացի թվայնացման հետ կապված առաջադրանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել ուսումնական գործընթացի ինքնավարությունը՝ որպես հեռավար ուսուցման հիմնական բաղադրիչ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թվային տեխնոլոգիան սովորողներին տեղեկատվության և գիտելիքների արդյունավետ մատուցման գործիք է, դասավանդման արդյունավետ եղանակ, գործիք՝ նոր կրթական միջավայր կառուցելու համար: Այն թույլ է տալիս ավելի հստակ ձևակերպել այն նպատակներն ու խնդիրները, որոնց իրականացումը թելադրված է նոր սերնդի կրթական չափանիշներով և տեղեկատվական հասարակության սոցիալ-մշակութային տեսակետից մեծ պահանջարկ կարող է ունենալ: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ վերլուծությունը հրապարակվել է ԿՏՄ կայքում (*http://www.eib.am/self-regulated-learning/*):

➢ ՀՀ-ում արտակարգ դրության իրավական ռեժիմի շրջանակներում 2020 թվականի մայիսի 3-ից պարետի համապատասխան որոշմամբ նախադպրոցական կրթության հաստատությունների վերագործարկման արդյունքում (մայիսի 25-ից սեպտեմբերի 11-ը) ԿՏՄ կողմից Երևան քաղաքի համայնքային և ոչ պետական, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքային մանկապարտեզներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով իրականացվել են **1086** մշտադիտարկումներ:

Ամենօրյա պարբերականությամբ, ամփոփվել է Երևանի համայնքային ենթակայության մանկապարտեզների սաների հաճախումների վերաբերյալ վարչական շրջաններից ստացված տեղեկատվությունը: Իրականացված մշտադիտարկումների արդյունքները և մանկապարտեզների սաների հաճախումների վերաբերյալ տեղեկատվությունը ամենօրյա պարբերականությամբ ներկայացվել են Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Համայնքային ենթակայության մանկապարտեզների դեպքում համապատասխան քաղաքապետներին, ոչ պետական մանկապարտեզների դեպքում՝ տնօրեններին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել մանկապարտեզներում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Ըստ մշտադիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների արդյունքում կազմված արձանագրությունների, ելնելով անվտանգության կանոնների խախտումները վերացնելու

անհրաժեշտությունից՝ ՀՀ պարետին են ներկայացվել Երևանի համայնքային ենթակայության 15 մանկապարտեզների գործունեության ժամանակավորապես կասեցումների վերաբերյալ առաջարկություններ: ՀՀ պարետի համապատասխան որոշումներով ժամանակավորապես կասեցվել է համայնքային 15 մանկապարտեզների գործունեությունը (1-ից 7 օր տևողությամբ):

ՀՀ պարետի 10.06.2020թ. № Ց/100-2020 ցուցման համաձայն Տեսչական մարմինների համակարգման գրասենյակ է ներկայացվել ԿՏՄ կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խնդիրների համապարփակ վերլուծությունը: Ելնելով մշտադիտարկումների արդյունքներից՝ մանկապարտեզների հետագա գործունեության նպատակահարմարության, ինչպես նաև աշխատող և սոցիալապես անապահով ծնողների երեխաների ցերեկային խնամքը կազմակերպելու այլընտրանքային եղանակների և մեխանիզմների վերաբերյալ առաջարկվել է՝ վերանայել անբարենպաստ պայմաններում գործող մանկապարտեզների հետագա գործունեության նպատակահարմարությունը՝

- աշխատող ծնողների երեխաներին ժամանակավորապես տեղափոխելով նույն վարչական շրջանում գործող առավել բարենպաստ պայմաններ ունեցող մանկապարտեզներ,
- չաշխատող և սոցիալապես անապահով ծնողների երեխաների համար փոխհատուցել սննդի կազմակերպման գումար, որը կարող է ձևավորվել նաև անբարենպաստ պայմանների պատճառով փակված մանկապարտեզների ախտահանման միջոցների, սպառված էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վրա չծախսված միջոցներից,
- հնարավորինս սեղմ ժամկետում մանկապարտեզներն ապահովել հոսող տաք ջրով, համապատասխան ծորակներով, սպասքի լվացման անհրաժեշտ պարագաներով,
- սպասքի պահպանման տարածքն առանձնացնել սանհանգույցից,
- վերացնել տարածքների և միջավայրի վերաբերյալ արձանագրված այն խախտումները, որոնք հիմնանորոգում չեն պահանջում:

Սույն թվականի հունիսի 22-ից սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում Երևանի համայնքային ենթակայության 160 մանկապարտեզներից գործել են 22 հերթապահ մանկապարտեզներ:

- ՀՀ պարետի 30.07.2020թ. N Ց/152-2020 ցուցման համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն են ներկայացվել հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբացման և համավարակի պայմաններում դրանց կառավարման վերաբերյալ ՀՀ կրթության տեսչական մարմնի առաջարկներն ու դիտարկումները՝ ներկայացված ըստ ՀՀ պարետի գրությանը կից ծրագրի նախագծի՝ համապատասխան մեկնաբանություններով:
- ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման Հավելված N 13-ում ներառված անվտանգության կանոնների 5-րդ կետի 5-րդ ենթակետի՝ սպասքի պարզաջրման ավազանի երրորդ բաժնի առկայության պահանջի կատարումը բազմաթիվ մանկապարտեզների կողմից տարբեր պատճառներով չապահովվելու և որպես երրորդ ավազան մեծ թասեր գործածելու խնդրին լուծում տալու և մասնագիտական դիրքորոշում ստանալու նպատակով ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարը՝ 2020 թվականի հուլիսի 31-ի N 01/01-1/649-2020 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարին:

ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 17–Ն հրամանում կատարվել է ԿՏՄ կողմից ներկայացված առաջարկի վերաբերյալ համապատասխան փոփոխություն:

- ՀՀ պարետի ցուցման համաձայն՝ ԿՏՄ կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցից» (այսուհետ՝ ուղեցույց) բխող անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով՝ մշակվել են մշտադիտարկման և տեղեկությունների արագ հավաքագրման ձևաթղթեր, հանրային լայն իրազեկում ապահովելու նպատակով մշակվել են նաև ԿՏՄ պաշտոնական կայքում (www.eib.am) հրապարակվելիք խորհրդատվական տեսահոլովակներ:

Ուղեցույցն առավել ընկալելի և գործածման առումով արդյունավետ դարձնելու նպատակով՝ ուղեցույցի վերաբերյալ ՀՀ պարետին ներկայացվել են ԿՏՄ-ի դիտողություններն ու առաջարկությունները:

➢ 2020 թվականի III և IV եռամսյակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ 186 և 96 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 147 հանրակրթական և 90 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: 5 հաստատություններում արձանագրված խախտումները շտկելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

Համավարակի պայմաններում ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների, ստուգայցերի, մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնական հաստատությունները այնուամենայնիվ պահպանում են կրթական գործընթացի կազմակերպման անվտանգությունը: Սակայն, համավարակի անմիջական ազդեցությանը կրթության որակին՝ ԿՏՄ-ն անդրադառնալու է 2021 թվականի գործունեության ծրագրով նախատեսած գործառույթների շրջանակում:

➢ Ուսումնասիրվել են ստուգումների արդյունքում կազմված ակտերը և տրված հանձնարարականները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների թիվը 125 է, տրված հանձնարարականների թիվը՝ 84: Հանրակրթության ոլորտում համապատասխան խախտումների թիվը 321 է, հանձնարարականների թիվը՝ 131: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում խախտումների թիվը՝ 97 է, հանձնարարականների թիվը 44: Նախադպրոցական կրթության ոլորտում խախտումների 33%-ի հետևանքներն արդեն իսկ վերացված են եղել: Հանրակրթության ոլորտում համապատասխան ցուցանիշը 59% է, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ 55%: Ստուգումների արդյունքում կազմված ակտերի և հանձնարարականների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրված խախտումների մի մասի հետևանքները ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում արդեն իսկ շտկված են լինում: Այս ցուցանիշը նաև ԿՏՄ կողմից իրականացված խորհրդատվական միջոցառումների արդյունք է:

7.Տեղեկություն իրականացված ստուգումների վերաբերյալ

7.1.Հաշվետու տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

ԿՏՄ կողմից իրականացվել են 81 (73%) ստուգումներ՝ ՀՀ 21 մանկապարտեզներում, 41 դպրոցներում, 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնարան), 16 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ քոլեջ):

7.2.Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները 74-ն են (71%):

Համաձայն ԿՏՄ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ նախատեսված էր ստուգումներ իրականացնել 104 ուսումնական հաստատություններում (40 դպրոցներ, 36 մանկապարտեզներ, 4 ուսումնարաններ, 24 քոլեջներ): Ստուգումներ են իրականացվել 36 (90%) դպրոցներում, 20 (56%) մանկապարտեզներում, 3 (75%) ուսումնարաններում, 15 (63%) քոլեջներում:

Դպրոցի չգործելու պատճառով ստուգում չի իրականացվել ՀՀ Շիրակի մարզի «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցում: Համաձայն դպրոցի տնօրենի՝ 17. 02. 2020թ. գրության՝ 08. 01. 2020թ-ից դպրոցը դադարեցրել է իր գործունեությունը ֆինանսավորման բացակայության պատճառով:

7.3.Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).

Ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումները 7-ն են (5 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 քոլեջ (որոնցից 1-ը նաև ըստ ստուգումների տարեկան ծրագրի)), որը կազմում է ստուգումների ընդհանուր թվի 6%-ը, իրականացված ստուգումների թվի 9%-ը:

Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներն իրականացվել են ԿՏՄ-ում ստացված դիմումների հիման վրա:

7.4.Տեղեկատվություն 1 ստուգման (պլանային և ոչ պլանային) ժամանակ ծախսված ֆինանսական և մարդկային ռեսուրսների քանակի, ինչպես նաև 1 ստուգման միջին տևողության վերաբերյալ

Մեկ ստուգման միջին տևողությունը կազմել է 3.28 աշխատանքային օր, ծախսը՝ 43374.1 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1.54 մարդ: Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.3 աշխատանքային օր, ծախսը՝ 45410.8 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1.59 մարդ: Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.14 աշխատանքային օր է, ծախսը՝ 21842.86 ՀՀ դրամ, մարդկային ռեսուրսները՝ 1 մարդ:

7.5.Ստուգումների արդյունքները.

Նախադպրոցական կրթության ոլորտ

Նախադպրոցական կրթության ոլորտում ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, պետական կրթական չափորոշիչների, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացման նպատակով 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել ՀՀ 20 մանկապարտեզներում և ոչ պլանային ստուգում՝ մեկ մանկապարտեզում:

Ստուգումների արդյունքում 21 մանկապարտեզներում հայտնաբերված՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումների վերաբերյալ կազմվել է 21 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից տնօրեններին՝ համաձայն կարգադրագրերի տրվել են կատարման համար հանձնարարականներ: Ստուգումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Կրթության բնագավառում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները բացառելու և ստուգումների արդյունքում վեր հանված խնդիրներին լուծում տալու նպատակով՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները՝ իրավական կարգավորումների վերաբերյալ համապատասխան առաջարկներով՝ ներկայացվել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարին:

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ԿՏՄ գործունեության եռամսյակային հաշվետվություններում (տե՛ս http://www.eib.am/reports/):

Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներն իրականացվել են ըստ ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 4-ի № 1139-Ն որոշմամբ հաստատված № 1 հավելվածի ստուգաթերթերի (№ 1,2,3):

Ստուգաթերթ 1. ՆՈՒՀ-ում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել բոլոր մանկապարտեզներում (նույնը՝ 2019, 2018 թվականներին):

1. Հաստատության կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրության պահանջներին՝ **5 (25%)** մանկապարտեզում (***«Ջունիոր Քլաբ» մանկական կենտրոն» ՍՊԸ, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 4, ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 2, Օձունի, ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզներ***): Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է **21 (62%),** 2018 թվականին՝ **8 (28%)** մանկապարտեզում:

2. Մանկապարտեզը չունի կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիա՝ 4 (20%) (***ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքի թիվ 2, Օձունի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի թիվ 2, ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզներ***) մանկապարտեզում: Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է **9 (26%),** 2018 թվականին՝ **8 (28%)** մանկապարտեզում:

3. Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով՝ **12 (60%)** մանկապարտեզում՝ **33** խախտում (***Երևանի թիվ 24 (1), 82 (2), 84 (3), 137(4), ՀՀ Լոռու մարզի Օձունի (2), Վանաձորի թիվ 11 (2), թիվ 32 (1), ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի թիվ 2 (8), Վերիշենի (3), ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 4 (4), ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի (2), ««Ջունիոր Քլաբ»***

մանկական կենտրոն» ՍՊԸ (1) մանկապարտեզներ մանկապարտեզներ): Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է **28 (82%)** մանկապարտեզում **96** խախտում, 2018 թվականին՝ **16 (55%)** մանկապարտեզում՝ **35** խախտում:

4. Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չեն իրականացվել չափորոշչի համապատասխան որակական պահանջները՝ 4 (20%) մանկապարտեզում (***Երևանի թիվ 24, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ», ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի, ՀՀ Լոռու մարզի Օձունի մանկապարտեզներ):*** Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է **13 (38%),** 2018 թվականին՝ **3 (10%)** մանկապարտեզում:

5. ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով տրված նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով համակազմի սահմանային թվերի խախտումներ՝ 8 (40%) մանկապարտեզում (***Երևանի թ.թ. 24, 82, 137, 142, 153, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 11, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի թիվ 6 «Արևիկ»):*** Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է 21 (48%), 2018 թվականին՝ 4 (14%) մանկապարտեզում:

6.Խմբերի երեխաների խտությունը գերազանցում է սահմանվածը՝ **17 (85%)** մանկապարտեզում ***(Երևանի թ.թ. 24, 82, 84, 137, 142, 153, 160, ՀՀ Լոռու մարզի Օձունի, Վանաձորի թիվ 11, թիվ 32, Սպիտակի համայնքի թիվ 2, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի թիվ 6 «Արևիկ», Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ», թիվ 16 «Ոստան», ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 4, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի թիվ 2, Վերիշենի մանկապարտեզներ):*** Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է **14 (41%),** 2018 թվականին՝ **26 (90%)** մանկապարտեզում:

7.Մանկավարժական աշխատողների հաստիքային միավորների պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներ՝ **17 (85%)** մանկապարտեզում ***(Երևանի թիվ 24, 82, 84, 109, 137, 142, 153, 160, ՀՀ Լոռու մարզի Օձունի, Վանաձորի թիվ 11, թիվ 32, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի թիվ 6 «Արևիկ», Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ», թիվ 16 «Ոստան», ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի թիվ 2, Վերիշենի, ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզներ):*** Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է՝ **29 (85%)**, 2018 թվականին՝ **22 (76%)** մանկապարտեզում:

Ստուգաթերթ 2. ՆՈՒՀ-ում մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 15 (75%) մանկապարտեզներում:

Մանկավարժական աշխատողներին ներկայացվող պաշտոնային պարտականությունների չկատարում՝ 9 (45%) մանկապարտեզում ***(Երևանի թ.թ. 24, 82, 142, 153, 160, ՀՀ Լոռու մարզի Օձունի, Սպիտակի համայնքի թիվ 2, ՀՀ Սյունիքի մարզի Վերիշենի, ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզներ):*** Այս խախտումը 2019 թվականին արձանագրվել է՝ 11 (32%), 2018 թվականին՝ 1 (3%) մանկապարտեզում:

Ստուգաթերթ 3. ՆՈՒՀ-ում զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 4 (20%) մանկապարտեզներում:

Հաստատության սաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների չկատարում՝ 4 (20%) մանկապարտեզում ***(Երևանի թիվ 24, 82, ՀՀ Լոռու մարզի Օձունի, ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզներ):*** 2019 թվականին զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների խախտումներ են արձանագրվել 7 (21%) մանկապարտեզում: 2018 թվականին մանկապարտեզներում զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:



Ինչպես արտահայտված է գծապատկերում 2019 թվականի համեմատ ուսումնական հաստատությունների թվի տոկոսային համամասնությամբ նվազել են ՆՈՒՀ-ում մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին, ՆՈՒՀ-ում զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները:

Մանկապարտեզներին տրված հանձնարարականների համադրման արդյունքները ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններում:

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ

2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ԿՏՄ կողմից ստուգումներ են իրականացվել ՀՀ 36 դպրոցներում: Ստուգումների արդյունքում 35 (97%) ուսումնական հաստատություններում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, կազմվել է 35 ակտ: ԿՏՄ ղեկավարի կողմից հաստատությունների տնօրեններին՝ համաձայն կարգադրագրերի, տրվել են հանձնարարականներ: Ստուգումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին: Ստուգումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2020 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Ստուգումներն իրականացվել են ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի № 1139-Ն որոշմամբ հաստատված № 1, 3, 4, 6, 7, 8, 11 ստուգաթերթերի:

Ստուգաթերթ 1. Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 30(83%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել դպրոցներից 15-ում (45%), 2018 թվականին՝ 6-ում (32%):

1. Խախտվել է դպրոցին տրված հանրակրթական ծրագրերով գործունեության լիցենզիայով սահմանված սովորողների համակազմի սահմանային տեղերի թիվը՝ 5 (14%) դպրոցում ***(ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, Արևիկի մ/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ, ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի մ/դ, Ամասիայի մ/դ):***

2.Ուսպլանի խախտումներ՝ 12 (33%) դպրոցում ***(ՃՇՀԱՀ ա/դ, Երևանի հ.հ. 21 հ/դ, 75 հ/դ, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, Արևիկի մ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 37 ա/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանևանի մ/դ, Դդմաշենի մ/դ, Սևանի ա/դ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի ա/դ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 18 մ/դ):***

3.Դասարանում սովորողների թիվը գերազանցում է ուսումնական պլանով սահմանված թվին՝ 2 (6%) դպրոցում **(*ՄՇՀԱՀ ա/դ, Երևանի հ. 21 հ/դ*)**:

4.Դպրոցի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելիին՝ 21 (58%) դպրոցում (***ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի մ/դ, Ձորագլխի մ/դ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, Արևիկի մ/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ, Բյուրեղավանի ա/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.հ. 11 հ/դ, 19 հ/դ, 32 հ/դ, 37 ա/դ, Սառնաղբյուրի մ/դ, Ամասիայի մ/դ , ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի ա/դ, Վանևանի մ/դ, Դդմաշենի մ/դ, Զոլաքարի հ. 2 մ/դ, Ծովազարդի մ/դ, Գանձակի հ. 2 մ/դ, Սարուխանի հ. 2 մ/դ, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 18 մ/դ):***

Ստուգաթերթ 3. Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 35(97%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 33 (100%), 2018 թվականին՝ 19 (100%) դպրոցում:

Մասնավորապես.

1.սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի)՝ 28 (78%) դպրոցում 96 խախտում (***Երևանի հ.հ. 21 հ/դ (2), 22 հ/դ (5), 74 հ/դ (4), 75 հ/դ (5), 95 մ/դ (5), 129 հ/դ, ՄՇՀԱՀ ա/դ (3), ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ (9), Արևիկի մ/դ (6), ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ (3), Բյուրեղավանի ա/դ (9), ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.հ. 11 հ/դ (5), 19 հ/դ (11), 32 հ/դ (5), 37 ա/դ (4), Սառնաղբյուրի մ/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանևանի մ/դ, Զոլաքարի հ. 2 մ/դ, Ծովազարդի մ/դ (2), Գանձակի հ. 2 մ/դ (2), ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի մ/դ (4), ՀՀ Լոռու մարզի Չկալովի հ/դ (2), Լուսաղբյուրի մ/դ, Մեծավանի հ.1 մ/դ, Վանաձորի հ. 11 ա/դ, ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի մ/դ, Ձորագլխի մ/դ):***

2. ստուգման ընթացքում տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների տոկոսային թիվը կազմել է 40% և ավելի գրավոր աշխատանքներ տրված 9 դպրոցներից 6(67%)-*ում* ***(Երևանի հ. 22 հ/դ, ՄՇՀԱՀ ա/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 37 ա/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի մ/դ):***

3. սահմանված կարգով չի իրականացրել դպրոցի բյուջեի մշակման և հաստատման գործընթացը՝ 6(17%) դպրոցում ***(Երևանի հ. 74 հ/դ, 95 մ/դ, ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանևանի մ/դ, Սարուխանի թիվ 2 մ/դ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի մ/դ):***

4. սովորողների ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ **20(56%)** դպրոցում (***ՄՇՀԱՀ ա/դ, Երևանի հ.հ. 21 հ/դ, 74 հ/դ, 75 հ/դ, 95 մ/դ, 129 հ/դ, ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի մ/դ, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.հ. 11 հ/դ, 19 հ/դ, 37 ա/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդի մ/դ, Սևանի ա/դ, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Մեծավանի հ. 1 մ/դ, Լերմոնտովոյի մ/դ, Վանաձորի հ.հ. 18 մ/դ, 24 մ/դ, Ստեփանավանի հ. 6 մ/դ***)*:*

5. սովորողների ազատումը դպրոցից իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ 4 (11%) դպրոցում *(**ՄՇՀԱՀ ա/դ, Երևանի հ. 95 մ/դ, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի հ. 2 մ/դ):***

6. ներքին գնահատում չի իրականացվել՝ 5 (14%) դպրոցում ***(Երևանի հ. 95 մ/դ, ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի հ. 2 մ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 11 հ/դ):***

Ստուգաթերթ 4. Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքումՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 11(31%) դպրոցում (***Երևանի հ.հ. 22 հ/դ, 75 հ/դ, ՄՇՀԱՀ ա/դ, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, Արևիկի մ/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.հ. 11 հ/դ, 37 ա/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշենի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի մ/դ***): Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 13 (39%), 2018 թվականին՝ 14 (74%) դպրոցում:

Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատվություն չի կրել դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի նկատմամբ 8 (22%) դպրոցում ***(Երևանի հ. 22 հ/դ, ՃՇՀԱՀ ա/դ, ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ, Արևիկի մ/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 37 ա/դ, Ամասիայի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի մ/դ):***

Ստուգաթերթ 6. Հանրակրթական ուսումնական հաստատությունում կառավարման խորհրդի ձևավորմանն ու լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել դպրոցներից 27 (75%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 21 (64%), 2018 թվականին՝ 18 (95%) դպրոցում:

Ստուգաթերթ 7. Հանրակրթական ուսումնական հաստատությունում խորհրդակցական մարմիններին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 11 (31%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 16 (48%), 2018 թվականին՝ 16 (84%) դպրոցում:

Ստուգաթերթ 8. Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 24 (67%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 25 (76%), 2018 թվականին՝ 7 (37%) դպրոցում:

Ստուգաթերթ 11. Հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 20 (56%) դպրոցում: Այս ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում 2019 թվականին խախտումներ են արձանագրվել 20 (61%), 2018 թվականին՝ 8 (42%) դպրոցում:

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներն ըստ հաստատությունների ներկայացվել են եռամսյակային հաշվետվություններում:



Ինչպես արտահայտված է գծապատկերում 2019 թվականի համեմատ ուսումնական հաստատությունների թվի տոկոսային համամասնությամբ նվազել են Հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի (Ստուգաթերթ 3), տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների (Ստուգաթերթ 4), Հանրակրթական ուսումնական հաստատությունում խորհրդակցական մարմիններին ներկայացվող պահանջների (Ստուգաթերթ 7), Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների (Ստուգաթերթ 8), Հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի պահանջների (Ստուգաթերթ 11) կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ

2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրի համաձայն ԿՏՄ կողմից ստուգումներ են իրականացվել ՀՀ 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 15 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են 3 ուսումնարաններում և 12 քոլեջներում: ԿՏՄ ղեկավարի կողմից հաստատությունների տնօրեններին՝ համաձայն կարգադրագրերի, տրվել են հանձնարարականներ: Ստուգումների արդյունքներն համապատասխան առաջարկություններով ուղարկվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարին: Ստուգումների արդյունքները ներառվել են ԿՏՄ 2020 թվականի եռամսյակային հաշվետվություններում: Ստուգումներն իրականացվել են ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի № 1139-Ն որոշմամբ

հաստատված № 1-3,8 ստուգաթերթերի: Անդրադառնանք ստուգումների արդյունքներին ըստ ստուգաթերթերի: Այսպիսով.

Ստուգաթերթ 1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 6 (40%) քոլեջում (***Երևանի պետական տեխնոլոգիական, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի, Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական, Արթիկի, Գեղարքունիքի տարածաշրջանային, Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջներ***) և 2 (67%) ուսումնարանում (***Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան):*** 2019 թվականին այս ստուգաթերթի համաձայն խախտումներ էին արձանագրվել

14 քոլեջում (82%) և 9 ուսումնարանում (75%), 2018 թվականին՝ 5 քոլեջում (100%) և 2 ուսումնարանում (67%):

Մասնավորապես.

1.Խորհուրդը պատշաճ չի իրականացրել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, մասնավորապես. տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը և (կամ) չունի աշխատակարգ, նիստերը գումարվել են սահմանված ժամկետների խախտումներով՝ 18 հաստատություններից 5-ում (28%) (***Երևանի պետական տեխնոլոգիական, Արթիկի, Վարդենիսի «Բաղեյան», Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի, Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջներ):***

2. Խորհրդի անդամների ընտրությունը և (կամ) լիազորությունների դադարեցումը և (կամ) խորհրդի թափուր տեղի համալրումը իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ 8 (44%) հաստատությունում (***Երևանի պետական տեխնոլոգիական, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի, Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական, Արթիկի, Վարդենիսի «Բաղեյան», Աբովյանի բազմագործառութային, Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջներ, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան***):

Ստուգաթերթ 2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող և կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 7 (47%) քոլեջում և 3 (100%) ուսումնարանում: 2019 թվականին այս ստուգաթերթի համաձայն խախտումներ էին արձանագրվել 16 (94%) քոլեջում և 11 (92%) ուսումնարանում, 2018 թվականին՝ 5 (100%) քոլեջում և 2(67%) ուսումնարանում:

1.Կադրերի ընտրության խախտումներ՝ 8 (44%) հաստատությունում 11 անձ (***Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ (2), Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ (2), Աբովյանի պետական Էներգետիկական քոլեջ (1), «Հայբուսակ» համալսարանի քոլեջ (1), Ալավերդու պետական քոլեջ (1), Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ (2), Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ (1), Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան (1)***):

2. Տնօրենը Խորհրդի քննարկմանը չի ներկայացրել հաստատության ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը՝ 2 (11%) հաստատությունում ***(Արթիկի, Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջներ):***

3. Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվել է առանց ուսումնական ժամանակացույցի՝ 1(5%) հաստատությունում (***Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ):***

4. Հաստատությունում մասնագիտության 2017-2018, 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիների ուսումնական պլանները հաստատվել և կրթական գործընթացն իրականացվել է 3 տարի տևողությամբ (նաև լիցենզիան) 2 տարվա փոխարեն՝ 1(5%) հաստատությունում (***Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ):***

5. Տնօրենի կողմից հաստատված չէ Ձեռներեցություն առարկայական ծրագիրը (մոդուլը) և ներառված չէ հաստատության ուսումնական պլաններում՝ 1(5%) հաստատությունում ***(«Հայբուսակ» համալսարան ՍՊԸ քոլեջ***):

Ստուգաթերթ 3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 10 (56%) քոլեջում և 3 (100%) ուսումնարանում: 2019 թվականին այս ստուգաթերթի համաձայն խախտումներ էին արձանագրվել 13 (76%) քոլեջում և 10 (83%) ուսումնարանում, 2018 թվականին՝ 4 (80%) քոլեջում և 2 (67%) ուսումնարանում:

Ուսանողների **ընդունելության** գործընթացի խախտումներ են արձանագրվել 13 (72%) հաստատությունում ***(Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ, Աբովյանի կրթահամալիր, Աբովյանի պետական Էներգետիկական քոլեջ, Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ, Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ, «Հայբուսակ» համալսարան ՍՊԸ քոլեջ, ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական պետական քոլեջ, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ Արթիկի պետական քոլեջ, Ալավերդու պետական քոլեջ, Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան)***:

Ստուգաթերթ 8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորողների ակադեմիական արձակուրդում գտնվելու, տեղափոխման և վերականգնման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 9 (60%) քոլեջում և 1 (33%) ուսումնարանում: 2019 թվականին այս ստուգաթերթի համաձայն խախտումներ էին արձանագրվել 14 (82%) քոլեջում և 10 (83%) ուսումնարանում, 2018 թվականին՝ 3 (100%) ուսումնարանում:

1. Ուսանողական իրավունքի **վերականգնման** գործընթացի խախտումներ են արձանագրվել 10 (56%) հաստատությունում (***Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ, Աբովյանի կրթահամալիր, Աբովյանի պետական Էներգետիկական քոլեջ, Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ, Արթիկի պետական քոլեջ, Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ, ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական պետական քոլեջ, Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ,Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ, Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ):***

2. Ուսանողի **տեղափոխման** գործընթացի խախտումներ են արձանագրվել 5 (28%) հաստատությունում (***ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական պետական քոլեջ, Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ, Արթիկի պետական քոլեջ, Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ***):



2018-2020 թվականներին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքների համեմատական պատկերը արտահայտված է գծապատկերում: Ինչպես նկատում ենք ուսումնարանների դեպքում տոկոսային համամասնությամբ նվազել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության (Ստուգաթերթ 1), նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում սովորողների ակադեմիական արձակուրդում գտնվելու, տեղափոխման և վերականգնման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (Ստուգաթերթ 8): Քոլեջներում տոկոսային համամասնությամբ նվազել են բոլոր ստուգաթերթերի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները:

7.6.Վարչական վարույթների քանակը, դրանց հարուցելու հիմքերը

2020 թվականին ԿՏՄ նախաձեռնությամբ իրականացվել են 38 վարչական վարույթներ: Մասնավորապես.

➢ ԿՏՄ կողմից 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքի 21 նախադպրոցական, 2 հանրակրթական և 1 նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների տնօրեններին ԿՏՄ ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (կարգադրագրերի) կատարումը պարզելու, դրանց արդյունքների հիման վրա ուսումնական հաստատությունների գործունեության ռիսկերը վերագնահատելու, ըստ անհրաժեշտության՝ մեթոդական աջակցություն ցուցաբերելու և հանձնարարականների չկատարման դեպքում համապատասխան վարչական ակտ ընդունելու (գործողություն կատարելու) նպատակով՝ տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հրամանի համաձայն հարուցվել է վարչական վարույթ ՀՀ 24 ուսումնական հաստատություններում (դիտարկումներ):

Իրականացված վարչական վարույթի արդյունքում տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հրամանի համաձայն՝ վարչական վարույթը կարճվել է ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի N 9 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ-ի նկատմամբ՝ վերջինիս կողմից խախտումների հետևանքները վերացնելու պատճառով, վարչական ակտ է ընդունվել 23 հաստատությունների նկատմամբ՝ վերջիններիս կողմից խախտումների հետևանքները չվերացնելու կամ խախտումների հետևանքները սահմանված ժամկետում չվերացնելու համար:

➢ ՀՀ կրթության բնագավառի օրենսդրության համապատասխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ըստ անհրաժեշտության՝ իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցություն ցուցաբերելու, հնարավոր խախտումների հայտնաբերման պարագայում վարչական ակտ ընդունելու (գործողություն կատարելու) նպատակով ՀՀ Լոռու մարզի Ալավերդու և ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում, ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի 9 և ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի 3 մանկապարտեզներում իրականացվել են վարչական վարույթներ: Վարչական ակտ է ընդունվել բոլոր հաստատությունների նկատմամբ:

2019 թվականին ԿՏՄ նախաձեռնությամբ իրականացվել են 32 վարչական վարույթներ (դիտարկումներ): Ուսումնական հաստատությունների կողմից խախտումների հետևանքները վերացնելու կամ դրանք վերացնելու ուղղությամբ պատշաճ միջոցներ ձեռնարկելու հիմքով վարչական վարույթը կարճվել է 11 ուսումնական հաստատությունների նկատմամբ:

2018 թվականին ԿՏՄ նախաձեռնությամբ վարչական վարույթներ չեն հարուցվել:

2020 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են 60 վարչական վարույթներ: Վարչական վարույթները կարճվել են 12 (20%) հաստատությունների դեպքում: 2019 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են 139 վարչական վարույթներ, կարճվել են դրանցից 27-ը՝ 19%: 2018 թվականին ԿՏՄ-ում ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են 354 վարչական վարույթներ, կարճվել են դրանցից 94-ը՝ 27%:

7.7.Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կրկնվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, ինչպես նաև դրանց պատճառները, տարածվածությունը.

Նախադպրոցական կրթության ոլորտում առավել հաճախ կրկնվող 3 խախտումներն են՝

1. Մանկավարժական աշխատողների հաստիքային միավորների պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներ՝ **17 (85%)** մանկապարտեզում.

2. Խմբերի երեխաների խտությունը գերազանցում է սահմանվածը՝ **17 (85%)** մանկապարտեզում.

3.Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով՝ **12 (60%)** մանկապարտեզում:

Ինչպես արդեն նշվել է՝ հաստիքային միավորների պակաս հատկացումը կախված է համայնքների ֆինանսական միջոցներից, մանկավարժական աշխատողների ընտրությանը վերաբերող խախտումները՝ համապատասխան մասնագետների բացակայությունից՝ ինչը հանրապետության հատկապես գյուղական համայնքներում մեծագույն խնդիր է: Խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող խախտումների դեպքում պատճառը թե՛ ֆինանսական միջոցներն են, թե՛ շենքային պայմանները:

Հանրակրթության ոլորտում առավել հաճախ կրկնվող 3 խախտումներն են.

1. Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի)՝ **28 (78%)** դպրոցում.

2. Դպրոցի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելիին՝ **21 (58%)** դպրոցում

3. Սովորողների ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ **20(56%)** դպրոցում:

Ինչպես արդեն նշվել է կադրերի նշանակման վերաբերող խախտումները հիմնականում և առավելապես փոքր համայնքներում համապատասխան մասնագետների բացակայության պատճառով են, մինչդեռ սովորողների ընդունելությանը, դպրոցի կանոնադրությունը օրինակելիին չհամապատասխանելու վերաբերյալ խախտումները՝ տնօրենի ոչ հետևողական աշխատանքի հետևանք:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առավել կրկնվում են հետևյալ խախտումները՝

1. Ուսանողների **ընդունելության** գործընթացի խախտումներ՝ 13 (72%) հաստատությունում.

2. Ուսանողական իրավունքի **վերականգնման** գործընթացի խախտումներ՝ 10 (56%) հաստատությունում.

3. Կադրերի ընտրության խախտումներ՝ 8 (44%):

Արդեն իսկ նշվել է, որ այս ոլորտում ևս կադրերի նշանակումը գերակա խնդիր է, իսկ ուսանողների ընդունելության, ուսանողական իրավունքի վերականգնման գործընթացներին վերաբերող խախտումները՝ տնօրենների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների ոչ պատշաճ կիրարկման արդյունք:

7.8.Տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցներ.

2020 թվականին ԿՏՄ կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում լիազոր մարմինների կողմից ուսումնական հաստատությունների տնօրենների (ուսումնական գծով տեղակալի) նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Մասնավորապես.

N	Ուսումնական հաստատության անվանումը	Պաշտոնը	Կիրառված կարգապահական տույժը
1.	«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ	Տնօրեն	Նկատողություն
2.	«Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	Տնօրեն	Նկատողություն
3.	«Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ	Տնօրեն	Նկատողություն
4.	«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ	Տնօրեն	Նկատողություն
5.	«Աբովյանի պետական Էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ	Տնօրեն	Նկատողություն
6.	«ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	Տնօրենի ուսումնական գծով տեղակալ	Խիստ նկատողություն

8.ԿՏՄ վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն

Նախադպրոցական կրթության ոլորտ. ԿՏՄ կողմից ստուգումների տարեկան ծրագրի համաձայն 2018 թվականին ստուգումներ են իրականացվել 29, 2019 թվականին՝ 34, 2020 թվականին՝ 20 մանկապարտեզներում: 2018 թվականի ստուգումների արդյունքում միջին ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի կազմել է 12, 2019 թվականին՝ 24, 2020 թվականին՝ 18.5 միավոր:



Հանրակրթության ոլորտ. ԿՏՄ կողմից ստուգումների տարեկան ծրագրի համաձայն 2018 թվականին ստուգումներ են իրականացվել 19, 2019 թվականին՝ 33, 2020 թվականին՝ 36 դպրոցներում: 2018 թվականի ստուգումների արդյունքում միջին ռիսկային միավորը, ըստ ստուգաթերթերի կազմել է 11.6, 2019 թվականին՝ 9.8, 2020 թվականին՝ 7.6 միավոր:



Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ. Ստուգումների տարեկան ծրագրի համաձայն 2018 թվականին ստուգումներ են իրականացվել 3, 2019 թվականին՝ 12, 2020 թվականին՝ 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: 2018 թվականի ստուգումների արդյունքում միջին ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի կազմել է 11, 2019 թվականին՝ 12, 2020 թվականին՝ 7.4 միավոր:

Ստուգումների տարեկան ծրագրի համաձայն 2018 թվականին ստուգումներ են իրականացվել 5, 2019 թվականին՝ 17, 2020 թվականին՝ 15 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: 2018 թվականի ստուգումների արդյունքում միջին ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի կազմել է 8.2, 2019 թվականին՝ 15, 2020 թվականին՝ 5.3 միավոր:



Ինչպես տեսնում ենք, ըստ ռիսկայնության միջին միավորների համեմատության 2020 թվականին ռիսկայնության միջին միավորը բոլոր ոլորտներում 2019 թվականի համեմատությամբ նվազել է: Այսինքն՝ 1 ստուգման միջին ռիսկային միավորը (ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներին համապատասխան կշռային միավորների միջինը) 2020 թվականին նվազել է 2019 թվականին նույն ստուգաթերթերի համաձայն իրականացված ստուգումների համապատասխան ցուցանիշի նկատմամբ, ինչը վկայում է ՀՀ օրենսդրության պահանջների կիրարկման առումով առկա վիճակի բարելավման մասին:

Ստորև բերված դիագրամում ներկայացված են միջին ռիսկային միավորներն ըստ ոլորտների և տարիների.



Չնայած, բոլոր ոլորտներում էլ ՀՀ օրենսդրության պահանջների կիրարկման առումով իրավիճակը բարելավվել է, սակայն 2021 թվականի իրավիճակի բարելավման վերաբերյալ այդ առումով կանխատեսում կարող ենք անել դեռևս միայն հանրակրթության ոլորտի մասով (միջին ռիսկային միավորը նվազում է):

2020 թվականին թե նախադպրոցական կրթության, թե հանրակրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում առավել ռիսկային է համարվել տնօրենի գործունեությունը: Ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների համաձայն՝ «Տնօրենին ներկայացվող պահանջներին ուղղված ստուգումների» ստուգաթերթով ձևավորված կշռային միավորը նախադպրոցական կրթության ոլորտում կազմել է ընդհանուր կշռային միավորների հանրագումարի 69.9%-ը, հանրակրթության ոլորտում՝ 57.3%-ը:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկային միավորների գերակշռող մասը ձևավորվել է «Տնօրենին ներկայացվող և կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների» ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում՝ 40%: Սակայն, այս ստուգաթերթի համաձայն խախտումներ արձանագրվել են հաստատությունների 56%-ում: Մինչդեռ՝ Նախնական մասնագիտական և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների ստուգաթերթի համաձայն ձևավորված կշռային միավորը կազմել է ընդհանուր կշռային միավորի 22.2%-ը, իսկ խախտումներ արձանագրվել են հաստատությունների 72.2%-ում: Ուստի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկային են նաև սովորողների ընդունելությանը վերաբերող գործառույթները:

Սակայն, կրթական գործունեության տեսանկյունից ուսումնական հաստատության ռիսկը ոչ միայն կրթության բնագավառը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, այլ նաև կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոնների առկայության հավանականությունն է: Իսկ միայն օրենսդրության պահանջների արձանագրումը և ըստ ստուգաթերթերի ռիսկայնության գնահատումը հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել կրթության որակի և վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների մասին: Այդ հիմնավորումով էլ 2020 թվականին հանրակրթության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում ԿՏՄ-ն սկսեց կիրառել նախապես մշակված կրթության որակի գնահատման գործիքակազմը (այսուհետ՝ նաև ձևաթղթեր):

Համաձայն 2020 թվականի գործունեության ծրագրի՝ նախատեսված էր ձևաթղթերը կիրառել ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված բոլոր դպրոցներում, սակայն, Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով այն կիրառվել է միայն 2020 թվականի I եռամսյակում ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամաններով ստուգված ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ, Գյումրու հ. 37 ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի միջնակարգ, Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական, Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական, հ.22 հիմնական և ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:

Կրթական գործընթացի գնահատման ընթացքում գնահատվել են կառավարման խորհրդի (այսուհետ՝ նաև խորհուրդ), տնօրենի գործունեությունը, «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչները, ուսումնական միջավայրը: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը:

Խորհուրդների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշները գնահատված դպրոցներում «Լավ» կամ «Բավարար» են, բացառությամբ՝ «Անբավարար» գնահատված Մուսալեռի միջնակարգ դպրոցի: Գնահատման արդյունքները վկայում են խորհուրդների կրթության որակին նպաստելու ուղղությամբ պասիվ գործունեության վերաբերյալ:

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշներն են հիմնականում՝ «Լավ» և «Բավարար», ինչը ենթադրում է, որ կրթական գործընթացի կազմակերպման որակն ունի բարելավման կարիք բոլոր գնահատված դպրոցներում:

Ուսուցիչները գնահատման արդյունքում հիմնականում գրանցել են միջինից բարձր արդյունքներ, մինչդեռ այդ արդյունքները բավարար չեն կրթության բարձր որակ ապահովելու համար: Այդ մասին են վկայում սովորողների մնացորդային գիտելիքների գրանցված արդյունքները:

Իրականացված ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների մասով ունենք հետևյալ պատկերը. «Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը կազմել է 5 միավոր, «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը՝ 4 միավոր: Միջին գնահատականը «Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքից կազմել է 5,2 միավոր:

Գրավոր աշխատանքների արդյունքները ցույց են տալիս, որ վիճակը ավելի լավ է «Ինֆորմատիկա» առարկայի դեպքում: Իհարկե, պատկերը կարող էր այլ լինել 2020 թվականի ստուգումների ծրագրով

նախատեսված բոլոր դպրոցներում տրված գրավոր աշխատանքների դեպքում, քանի որ ՀՀ-ում արտակարգ դրությամբ պայմանավորված գրավոր աշխատանքներ տրվել են 36 դպրոցներից 9-ում՝ 25%: Այնուամենայնիվ, նախորդ տարվա հետ համեմատելով՝ տեսնում ենք, որ միջին գնահատականը 2020 թվականին նվազել է թե՛ «Հայոց լեզու» առարկայի թելադրության, թե՛ «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի դեպքում: Մասնավորապես՝

- «Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը 2018 թվականին կազմել է 4.9, 2019 թվականին՝ 5.8, 2020 թվականին՝ 5 միավոր.
- «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը 2018 թվականին կազմել է 3.8, 2019 թվականին՝ 4.4, 2020 թվականին՝ 4 միավոր (տես՝ ստորև բերված գծապատկերը):



«Ինֆորմատիկա» առարկայից գրավոր աշխատանքներ տրվել են միայն 2020 թվականին իրականացված ստուգումների ընթացքում:

Դպրոցների կրթական գործընթացի վերոնշյալ գնահատման արդյունքները վերլուծվել են յուրաքանչյուր դպրոցի մասով և ուղարկվել համապատասխան դպրոցի տնօրենին: Վերլուծություններում առանձնացվել են հաստատություններում արդյունավետ իրականացվող և զարգացման ենթակա գործառույթները: 9 դպրոցներում իրականացված կրթության որակի գնահատման արդյունքների վերլուծությունը հրապարակվել է ԿՏՄ կայքում (տե՛ս http://www.eib.am/reports/):

Ելնելով գնահատման արդյունքներից՝ տնօրեններին, կառավարման խորհուրդներին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել զարգացման ենթակա գործառույթները (բնութագրիչները) բարելավելու, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները կատարելու ուղղությամբ:

Գնահատված դպրոցներում զարգացման ենթակա են հիմնականում հետևյալ գործառույթները (բնութագրիչները)՝

Խորհուրդ

- Խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ չի ներկայացնում:
- Խորհուրդը տնօրենի ընթացիկ գործունեության, դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության, զարգացման ծրագրի կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողության արդյունքում տնօրենին առաջարկներ կամ հանձնարարականներ տալու անհրաժեշտություն չի տեսնում:
- Խորհրդի կողմից տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության շրջանակում կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ

դպրոցի տնօրենին տրվել են հանձնարարականներ, սակայն կատարողականը չի քննարկվել խորհրդի կողմից:

➢ Խորհուրդը դպրոցի ներքին գնահատման հաշվետվության, կրթության որակի բարձրացմանն ուղղված գործունեության վերաբերյալ քննարկումներ չի կազմակերպում, առաջարկություններ չի ներկայացնում: Խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործունեությունը որոշ դեպքերում գնահատվել է «Անբավարար»:

➢ Ստուգումների արդյունքում հայտնաբերվել են խորհրդի գործունեությանը վերաբերող այլ խախտումներ:

Տնօրեն

➢ Դպրոցի ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ, երկրորդում աճել է:

➢ Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 41%-ից ավելի:

➢ Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում Լավ և Գերազանց ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 30%:

➢ Ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից Լավ և Գերազանց գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում Լավ և Գերազանց գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի համեմատ ավելի ցածր է:

➢ Առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը հիմնականում մարզային փուլում որևէ հաջողություն չի արձանագրել:

➢ Ստուգման ընթացքում գնահատված ուսուցիչները չեն մասնակցել կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների, չունեն գիտամանկավարժական հոդվածներ:

➢ Գնահատման արդյունքում Գերազանց գնահատված ուսուցիչներ չկան:

➢ Ուսումնական միջավայրը անհրապույր է:

➢ Ստուգման արդյունքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների այլ խախտումներ:

Նկարագրված իրավիճակով պայմանավորված՝ ԿՏՄ-ն 2021 թվականը սահմանել է որպես անցումային և վերականգնողական գործառույթների տարի: ԿՏՄ գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրի նպատակ է սահմանվել՝ արդյունավետ վերահսկողության միջոցով հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության վրա 2020 թվականի հասցրած անմիջական (կարճաժամկետ) վնասների վեր հանելը, դրանց հաղթահարման ուղիները նախանշելը:

Խնդիրներն ըստ ոլորտների սահմանվել են այսպես.

➢ նախադպրոցական կրթության ոլորտում՝ Անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայրի ապահովում.

➢ հանրակրթության ոլորտում՝ Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության և դիմակայունության ապահովում.

➢ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթութության ոլորտներում՝ կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովում:

Համաձայն 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրի ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացնելու ՀՀ 113 ուսումնական հաստատություններում:

9. Օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին առաջարկները (բովանդակությունը, նպատակը)

ԿՏՄ կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարություն (վերջինիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ: Այսպես.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության առաջարկով առաջարկություններ և դիտողություններ են տրամադրվել

- «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» որոշման,
- «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման,
- «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (չափորոշիչ) որոշման ,
- «Օրենսդրական ակտի և կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման,
- **«**Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը սահմանելու, դրանց լրացման (գործածման) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2012 թվականի մայիսի 18-ի N 496-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «ՀՀ ԿԳ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,
- ՀՀ ԿԳ նախարարի՝ 26.04.2011թ. «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրեր» N 416-Ն հրամանի լրամշակված,
- ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» հ. 29-Ն հրամանի լրամշակված,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» հրամանի լրամշակված,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի լրամշակված

նախագծերի վերաբերյալ:

ԿՏՄ նախաձեռնությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն են ներկայացվել առաջարկություններ ըստ ոլորտների.

Նախադպրոցական կրթության ոլորտի վերաբերյալ

Ստուգումների արդյունքում վեր հանված որոշ խնդիրների լուծման նպատակով առաջարկություններ են ներկայացվել հետևյալ ենթաօրենսդրական իրավական ակտերի լրամշակումների վերաբերյալ՝

- ՀՀ ԿԳ նախարարի՝ «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրեր» 26.04.2011թ. N416-Ն հրամանով հաստատված հավելվածում,
- ՀՀ ԿԳ նախարարի՝ «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» 26.01.2007թ. h. 29-Ն հրամանով հաստատված հավելված 1-ում,
- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանով հաստատված հավելվածում ներառել իրավական կարգավորումներ, որոնք՝

- կբացառեն ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների կամ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների աշխատողներին սահմանվածից պակաս հաստիքային միավորներ հատկացնելը,
- կկարգավորեն ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքի տրամադրումը տարատարիք խմբերի առկայության դեպքում,
- կապահովեն բուժքրոջ ներկայությունը ողջ աշխատանքային օրվա ընթացքում:

Հանրակրթության ոլորտի վերաբերյալ

Հանրակրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով առաջարկներ են ներկայացվել հետևյալ իրավական ակտերի կարգավորումների լրամշակման վերաբերյալ՝

- Հանրակրթության մասին» ՀՀ օրենք (11-րդ հոդվածի 3-րդ մաս, 16-րդ հոդվածի 8-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին մաս),
- ՀՀ կառավարության 25.07.2002թ. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության N 1392-Ն որոշմամբ հաստատված Հավելված 3,
- ՀՀ կառավարության 14.10.2010թ. «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը՝ համաձայն N 4 հավելված» N1391-Ն որոշմամբ հաստատված,
- ՀՀ ԿԳ նախարարի 25.04.2010թ. **«**Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանով հաստատված հավելված,
- ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանով հաստատված հավելված,
- ՀՀ ԿԳ, պաշտպանության նախարարների 09.11.2011թ. N 1222-Ն համատեղ հրամանով հաստատված կանոնադրություն,
- ՀՀ ԿԳ նախարարի 03.05.2012թ. «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը հաստատելու և ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի ապրիլի 22-ի N391-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 388-Ն հրամանով հաստատված հավելված,
- ՀՀ ԿԳ նախարարի 24.11.2010թ. «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ

ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգ» N 1640-Ն հրամանով հաստատված հավելված,

➢ ՀՀ կառավարության 04.03.2010 թ. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ N 319-Ն որոշմամբ հաստատված հավելված.

- սահմանել կարգավորումներ, որոնք կբացառեն ոչ լեգիտիմ խորհրդի կողմից դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հնարավորությունը:

➢ ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013 թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ» N 396-Ն հրամանով հաստատված հավելված.

- ներառել իրավական կարգավորում, որը հնարավորություն կտա մասնագիտական կրթություն (նաև՝ ոչ բարձրագույն) ունեցող անձանց մասնակցելու ուսուցչի մրցույթին (նաև մինչև մրցույթ), եթե բավարարում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի անցումային դրույթների պահանջը: Այդ իրավական կարգավորումը կնպաստի նաև «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9.1 մասի պահանջի՝ «Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է», կատարման ապահովմանը:

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.05.2020 թ. «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ» N 06-Ն հրամանով հաստատված հավելված.

- ներառել կարգավորում, որը հնարավորություն կընձեռնի նախորդ ուսումնական տարվա պարապմունքների ավարտին մինչև 200 դասաժամին հավասարազոր ժամանակահատվածով հանրակրթությունից դուրս մնացած սովորողներին, բացառությամբ 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների, հաջորդ դասարանի համակազմում ընդգրկվելու համար:

➢ ՀՀ ԿԳ նախարարի 24.11.2010 թ. «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ» N 1640-Ն հրամանով հաստատված հավելված.

- ավելացնել նոր կարգավորում, որը հնարավորություն կտա ազգային փոքրամասնությանը պատկանող ծնողին ինքնուրույն կատարելու ուսուցման լեզվի ընտրությունը, եթե նրա երեխայի ծննդյան վկայականում նշված չէ վերջինիս ազգությունը:

- 24-րդ կետի պահանջում ավելացնել 15-րդ և 17-րդ կետերի պահանջները: Փոփոխությունը հնարավորություն կտա 1-4-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ՀՀ վերադառնալիս ուսումը հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում շարունակելու գործընթացի կազմակերպմանը:

- 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջում «… 9-ից 15 տարեկան պահանջը փոխել 9-ից 17 տարեկան (հիմնական կրթության վկայական չունեցող) …» պահանջով: Այս փոփոխությունը հնարավորություն կտա մինչև 17 տարեկան հիմնական կրթության վկայական չունեցող, հանրակրթությունից դուրս մնացած կամ ուսումն ընդհատած սովորողներին դպրոցում շարունակելու ուսումը և ստանալու հիմնական կրթության վկայական (առանց էքստեռն կարգի):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների վերաբերյալ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում վեր հանված խնդիրների լուծման նպատակով առաջարկություններ են ներկայացվել հետևյալ ենթաօրենսդրական իրավական ակտերի լրամշակումների վերաբերյալ՝

➢ ՀՀ կառավարության 01.07.2004 թ. N 1210-Ն և 20.06.2002թ. № 1009-Ն որոշումներով հաստատված «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական

հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների» օրինակելի կանոնադրություն,

- ՀՀ կառավարության 06.09.2007թ. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) /հավելվածի N2/ և դրսեկությամբ (էքստեռնատ) /հավելված N 1/ ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 31.01թ.2008թ. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության՝ հեռավար, դրսեկության կարգով ուսուցումն արգելված մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին N 118-ն որոշում,
- ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքների վերականգնման կարգ »,
- ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրամանով հաստատված «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ»,
- ՀՀ ԿԳ նախարարի 12.12.2006 թ. N 997-Ն հրամանով հաստատված «ՀՀ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգ»,
- ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. N 254-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»:

Միաժամանակ առաջարկվել է համապատասխան իրավական ակտերում՝

- ներառել նոր կարգավորում խորհրդի անդամի (ուսանողական և մանկավարժական կազմից) փոփոխման ժամկետի հետ կապված, եթե թափուր տեղն առաջացել է ամռան ժամանակահատվածում,
- հստակեցնել խորհրդի կազմում թափուր տեղի համալրման և առաջադրող մարմնի նոր թեկնածուի առաջադրման ժամկետները,
- սահմանել մանկավարժական կազմից և ուսանողական խորհրդից կոլեգիալ կառավարման մարմնի անդամի ընտրության և առաջադրման ընթացակարգ,
- սահմանել լիազոր մարմնի կողմից խորհրդի անվանական կազմի հաստատման ժամկետ:

10. ԿՏՄ-ի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկատվություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին

2020 թվականի ընթացքում տեսչական մարմնի ծառայողների գործողությունների կամ անգործության դեմ բերվել է 2 բողոք: Բողոքները ներկայացվել են ԿՏՄ:

Առաջին դիմում-բողոքի (Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիայի նախագահի կողմից բերված բողոք) պատճառը եղել է ստուգման ընթացքում ԿՏՄ ծառայողների կողմից իրականացված գործողությունների նկատմամբ ձևավորված անվստահությունը և, ըստ դիմումատուի, կողմնակալ վերաբերմունքը:

ԿՏՄ–ն դիմումատուին ուղարկել է պատասխան գրություն:

Երկրորդ դիմում-բողոքի հեղինակ քաղաքացին նշել է, որ այն ուսումնական հաստատության տնօրենը (որի դեմ ուղղված է եղել բողոքը) նախապես տեղյակ է պահվել ԿՏՄ–ի կողմից իրականացվելիք ստուգման մասին և սկսել է կարգի բերել ուսումնական հաստատության թղթաբանությունը: Քաղաքացին հայտնում է, որ, ըստ իր ունեցած տեղեկությունների, տնօրենին սպասվելիք ստուգման մասին հայտնել է ԿՏՄ-ի աշխատակիցներից մեկը, և խնդրում է ԿՏՄ ղեկավարին կանխել ապագայում այդօրինակ դեպքերը:

Քաղաքացին իր դիմում-բողոքում ներկայացրած տեղեկության մասին պարզաբանում է ստացել ԿՏՄ-ից: Քաղաքացին ևս մեկ դիմումով ԿՏՄ ղեկավարին հայտնել է, որ ստացված պարզաբանումը լիարժեք էր, և խնդրել է անհետևանք թողել իր առաջին դիմում-բողոքը:

Քաղաքացու դիմում-բողոքը կարճվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

ՀՀ վարչական դատարանի կողմից ԿՏՄ-ին ընդդեմ ընդունվել է մեկ վարչական վարույթ:

ՌԳՍՊՎԳ վարչություն